ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 09.10/ 399
09.10.2014 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

## ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ

(պարտավորեցնել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը հանցագործության մասին հաղորդումների հիման վրա կայացված որոշումները հաղորդում ներկայացրած անձին տրամադրելու պահանջի մասին)

**1.Գործի նախապատմությունը**

1.1. 2014թ. ապրիլի 2-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ԱՆ Արթիկ ՔԿՀ կալանավորներ Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի և Ջոն Մարտիրոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից, նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

1.2. 2014թ. ապրիլի 10-ին ՀՀ գլխավոր դատախազությունը հաղորդումը ուղարկել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

1.3.Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո, մինչ օրս հաղորդման հիման վրա կայացված որոշում՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից կազմակերպությունը չի ստացել, չնայած այն հանգամանքին, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու օրվանից անցել է 5 ամիս ժամանակ:

1.4. 2014թ. հունիսի 20-ին մեկ այլ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն Սվետլաննա Սուրիկի Պապիկյանի իրավունքների պաշտպանության նպատակով, որի վերաբերյալ որոշում կազմակերպությունը համապատասխան որոշում չի ստացել:

1.5. 2014 թ. սեպտեմբերի 15-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն Տիգրան Նորիկի Մելիքյանի

իրավունքների պաշտպանության նպատակով, որի վերաբերյալ մինչ օրս դեռևս քրեական դատավարության օրենսգրքի իմաստով որոշում կազմակերպությունը չի ստացել:

**2. Հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը հաղորդում ներկայացրած անձին տրամադրելու վերաբերյալ հիմնավորումներ.**

2.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) քրեական գործ հարուցելու մասին.

2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.

3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին»: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

Վերը նշված հոդվածները սահմանում են հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվող գործողությունները և դրանց ժամկետները: Սույն դեպքերում հանցագործության մասին հաղորդումները կազմակերպության կողմից ներկայացվել են դեռևս ամիսներ առաջ, որոնց ընթացքը օրենքով սահմանված կարգով պետք է լուծվեր անհապաղ և կայացված որոշումները պետք է ուղարկվեր հանցագործության մասին հաղորդում ներկայացրած իրավաբանական անձին, որը սակայն չի իրականացվել: Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի և Ջոն Մարտիրոսյանի և Սվետլանա Պապիկյանի իիրավունքերի պաշտպանության նպատակով ներկայացված հանցագործության մասին հաղորդումներով համապատասխան որոշումներ չստանալով չստանալով դիմումներ են ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որոնք ևս անպատասխան են մնացել: Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդման վրաբերյալ կայացված որոշումները կազմակերպությանը չտրամադրելով, կամ առհասարակ որոշում չկայացնելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունը դրսևորվել է ակնհայտ համատարած բնույթ կրող անգործություն: Սույն դեպքում ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից դրսևորվել է անգործություն, որը դրսևորվել է օրենքով սահմանված պարտավորությունը չկատարելով:

2.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է նաև հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու և տեղեկատվության տրամադրման կարգն այն դեպքում, երբ մերժվում է քրեական գործի հարուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին»:

Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

Վերը շարադրվածից բխում է, որ թե՛ քրեական գործ հարուցելու, և թե՛ քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում օրենսդիրը պարտադիր է համարել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը և դրա պատճենը հաղորդում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրամադրելը:

Այն դեպքերում երբ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո վարույթն իրականացնող մարմինը համապատասխան որոշումը չի տրամադրում, դրսևորում է անգործություն, որը այս դեպքում դրսևորվել է 3 գործերով, խախտվում է նաև այդ որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում դրանք բողոքարկելու դիմումատուի իրավունքը:

ՀՀ Հատուկ քննչական ծառայության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181,182, 185-րդ, ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածները՝

խնդրում եմ

պարտավորեցնել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը տրամադրել կազմակերպության կողմից

- 2014թ. ապրիլի 2-ին Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի և Ջոն Մարտիրոսյանի իրավունքների պաշտպանության համար ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը,

- 2014թ. հունիսի 20-ին Սվետլանա Պապիկյանի իրավունքերի պաշտպանության համար ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը,
- 2014թ. սեպտեմբերի 15-ին Տիգրան Մելիքյանի իրավունքերի պաշտպանության համար ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը:

Կից ներկայացնում եմ.

1. 2014թ. ապրիլի 2-ի հանցագործության մասին հաղորդման պատճենը
2. 2014թ. հուլիսի 2-ին ներկայացավ դիմումի պատճենը:
3. 2014թ. հունիսի 20-ին ներկայացված հաղորդման պատճենը
4. 2014թ. սեպտեմբերի 15-ին ներկայացված հաղորդման պատճենը:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Անի Չատինյան
achatinyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 02.07/249
02.07.2014 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ.Շահինյանին

# ԴԻՄՈՒՄ

(հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված
որոշում տրամադրելու պահանջի մասին)

Հարգելի պարոն Շահինյան,

2014թ. ապրիլի 2-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ ԱՆ Արթիկ ՔԿՀ կալանավորներ Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի և Ջոն Մարտիրոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից, նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո, մինչ օրս հաղորդման հիման վրա կայացված որոշում կազմակերպությունը չի ստացել, չնայած այն հանգամանքին, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու օրվանից մինչ օրս անցել է 2 ամիս ժամանակ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) քրեական գործ հարուցելու մասին.
2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին»:

Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է նաև հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու և տեղեկատվության տրամադրման կարգն այն դեպքում, երբ մերժվում է քրեական գործի հարուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին»:

Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

Վերը շարադրվածից բխում է, որ թե՛ քրեական գործ հարուցելու, և թե՛ քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում օրենսդիրը պարտադիր է համարել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը և դրա պատճենը հաղորդում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրամադրելը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181,182, 185-րդ հոդվածները՝

խնդրում եմ

տրամադրել կազմակերպության 02.04.2014թ. ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014-03. 07/260
03.07.2014 թ.

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ Սամվել Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

2014թ. մայիսի 13-ին Կազմակերպության կողմից Ձեզ ներկայացված թիվ 2014-13.05/176 գրությանն ի պատասխան, ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 2014 թ. հունիսի 20-ին ստացվել է Ե-3643 գրությունը, որով հայտնել են, որ (....) «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանն իր վարույթում գտնվող դատական գործով կարող է անցկացնել նաև արտագնա նիստ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «գործը քննող դատավորի որոշմամբ կարող է անցկացվել արտագնա դատական նիստ, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե

1. 2014թ. հունվարից մինչ հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քանի արտագնա դատական նիստ է անցկացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում,
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որ քաղաքներում են դրանք անցկացվել,
3. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որ դատավորներն են քննել արտագնա դատական գործեր,
4. յուրաքանչյուր դատավորի վարույթում քանի գործ է քննվել:

Խնդրում եմ տրամադրել արտագնա դատական նիստ անցկացրած դատավորների կողմից կայացված արտագնա դատական նիստ անցկացնելու մասին որոշումների պատճենները:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում քննված գործերով մեղադրյալների անուն ազգանունները, քաղաքացիական գործերով հայցվորների անուն ազգանունները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 02.04/ 142
02.04.2014 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ.Շահինյանին

Պատճենը՝
ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամներ, Արայիկ Զալյանը (ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավաբան) և Արինա Մեծոյանը (Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ) 2014թ. մարտի 27-ին Արթիկ քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության ժամանակ հանդիպել են նույն քրեակատարողական հիմնարկի կալանավորներ՝ Ռոբերտ Մուրադյանին, Անդրանիկ Մխիթարյանին և Ջոն Մարտիրոսյանին, ովքեր հայտնել են, որ ոստիկանության աշխատակիցների կողմից նրանց նկատմամբ կիրառվել են անմարդկային վերաբերմունք ցուցմունքներ կորզելու նպատակով:

Ա. Մասնավորապես՝ **Ռոբերտ Մուրադյանը** հայտնել է, որ 2013 թվականի հոկտեմբերի 27-ին Գյումրու Ոստիկանության Մուշ բաժանմունքի աշխատակից Արթուր Գրիգորյանը գնացել է իրենց տուն, նրա մորը՝ Շողիկ Մուրադյանին փոխանցել է իր հեռախոսահամարը և հայտնել է, որ Ռոբերտ Մուրադյանը պետք է ներկայանա ոստիկանություն: Նույն օրը Ռ. Մուրադյանը զանգահարել է Արթուր Գրիգորյանին: Շողիկ Մուրադյանի և Ջիվան Սահակյանի հետ վերջինիս մեքենայով գնացել են Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմաց, որտեղ էլ հանդիպել են Արթուր Գրիգորյանի հետ: Այնուհետև, ժամը 15:00-ի սահմաններում գնացել են Գյումրու Ոստիկանության Մուշ բաժանմունք:

Ռոբերտ Մուրադյանը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամներին հայտնել է, որ Գյումրու Ոստիկանության Մուշ բաժանմունքի տարբեր աշխատակիցների կողմից ենթարկվել է խոշտանգումների, ծեծի և արժանապատվությունը

նվաստացնող վերաբերմունքի: Գյումրու Ոստիկանության Մուշ բաժանմունքում հարցաքննության ընթացքում նրան տեղափոխել են մեկ աշխատասենյակից մյուսը և ոստիկանության տարբեր աշխատակիցներ մտնելով աշխատասենյակ իմանալով, թե ինչ է կատարվում հայհոյել են Ռոբերտ Մուրադյանին, հարվածել են, որն ավելի շատ ուղղված է եղել Ռ. Մուրադյանի արժանապատվությունը նվաստացնելուն, քան ֆիզիկական ցավ պատճառելուն: Ռ. Մուրադյանի փոխանցմամբ Գյումրու Ոստիկանության Մուշ բաժանմունքի ոմն Հակոբ անունով ոստիկանության աշխատակից հարցաքննության ժամանակ «դուբինկան հանել ա դրել սեղանին, հետո ջեբից հանել ա պահպանակը ու սպառնացել, որ եթե չխոստովանեմ կատարվածի մասին, պահպանակը կհագցնեմ դուբինկային ու կբռնաբարեմ քեզ»:

Ռոբերտ Մուրադյանը հայտնել է, որ այդ ընթացքում դրսից լսել է մոր բղավոցները և լացի ձայնը:

Ռոբերտ Մուրադյանը պնդում է, որ հարցաքննության ժամանակ ոստիկանության աշխատակիցները սեռական բնույթի հայհոյանքներ են տվել վերջինիս և նրա մորը, բռնություն են գործադրել նրա նկատմամբ՝ նվաստացնելով նրա անձը, բռնության միջոցով ցուցմունքներ են կորզել:

Բ. Ռոբերտ Մուրադյանի մոր՝ **Շողիկ Մուրադյանի** հետ զրույցից պարզ դարձավ, որ տղային Ոստիկանության բաժանմունքում պահել են 2013թ. հոկտեմբերի 27-ի ժամը 15:00-ից մինչև հոկտեմբերի 28-ի ժամը 01:00-ն ընկած ժամանակահատվածը, այնուհետև տեղափոխել են Ախուրյանի ՀՊՎ: Այդ ընթացքում գտնվելով Գյումրու Ոստիկանության Մուշ բաժանմունքի շենքում Շ. Մուրադյանը լսել է, թե ինչպես են ոստիկանության աշխատակիցները հայհոյում տղային, լսել է տղայի բղավոցները: Մի քանի ժամ հարցաքննելուց և խոշտանգումներից հետո ոստիկանության աշխատակիցներից մեկը մոտեցել է Շողիկ Մուրադյանին և հայտնել, որ անհրաժեշտ է լրացուցիչ հագուստ բերել տղայի համար, քանի որ նրա կրած հագուստները հանդիսանում են իրեղեն ապացույց և պետք է ուղարկեն փորձաքննության: Նույն օրը ոստիկանության աշխատակցի պահանջը կատարվել է:

Գ. **Անդրանիկ Մխիթարյանը** հայտնել է, որ նա Գյումրի քաղաքում աշխատում է տաքսու վարորդ: 2013թ. հոկտեմբերի 23-ին իր աշխատանքը կատարելու ժամանակ նա կանգ է առնում մթերային խանութի մոտ և մտնում խանութ: Խանութից դուրս գալով տեսնում է, որ մի խումբ ոստիկանության աշխատակիցներ հավաքված են իր մեքենայի կողքը, մոտենում է նրանց և հարցնում, թե ինչ է պատահել: Նրան չեն պատասխանում, երբ նա հայտնում է, որ ինքը հանդիսանում է տվյալ մեքենայի վարորդը: Ոստիկանության աշխատակիցներն անմիջապես հարձակվում են նրա վրա, հայհոյանքներ տալիս նրա հասցեին: Ա. Մխիթարյանը նշել է, որ ոստիկանության աշխատակիցները այնպես են հարձակվել իր վրա, որ իր ձեռքի ծխախոտը աչքն է մտել, այնուհետև նստեցրել են Օպել մակնիշի մեքենան և շարունակել են մեքենայում հարվածներ հացնել նրան: Ոստիկանության աշխատակիցները սպառնացել են նրան, որ նա չի պատկերացնում, թե ինչ են անելու նրան, եթե չասի, թե որտեղ են իր հետի տղաները, որոնց հետ միասին

հանդիպել են ռուս զինվորներին: Նա պատմել է իր ուղևորների մասին, բայց ոստիկանության աշխատակիցները չհավատալով նրան՝ շարունակել են հարվածել և հայհոյել: Ավելի ուշ նրան տեղափոխել են ոստիկանություն, այնուհետև քաշքշելով նրա վրա զոռալով բարձրացրել են ոստիկանության պետի մոտ: Պետին ներկայացրել են, որ Անդրանիկն է թալանել ռուսներին: Ոստիկանության պետը և տեղակալները հարձակվել են նրա վրա՝ հայտնելով «էս ռուս ես ռազբոյ անում» արտահայտություններով: Անդրանիկը վախից կախել է գլուխը, որովհետև հասկացել է, թե ինչքան պետք է ծեծեն իրեն: Այնուհետև մի քանի հարված հասցնելուց հետո պետը կարգադրել է, որ կարմիր բերետավոր տղաներ գան, այնքան մշակեն, որ խելքը գլուխը գա, դրանից հետո գործերը կտաք առաջ թող դատվի: Ա. Մխիթարյանին տարել են ինչ որ մի սենյակ: Այնտեղ են գտնվել ոստիկանության չորս աշխատակիցներ, որտեղ էլ նրան ասել են, որ ավելի լավ է խոստովանես, գիտես ինչ կանենք քեզ, այդ ժամանակ նա լացել է և հայտնել, որ նա տվյալ գործից տեղեկություններ չունի: Ոստիկանության աշխատակիցները սպառնացել են և հահոյանքներ տվել նրա հիվանդ մոր հասցեին: Նա չդիմանալով այդ նսեմացնող վերաբերմունքին, ձեռքը գցել է, որ մի բան անի, սակայն, այդ պահին ոստիկանության աշխատակիցները հրել են իրեն աթոռին և նա վատացել է, ընկել դեպրեսիայի մեջ: Այնուհետև չդիմանալով սպառնալիքներին, նվաստացնող վերաբերմունքին նա կատարել է Ոստիկանության աշխատակիցների պահանջը և գրել իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:

**Դ. Զոն Մարտիրոսյանը** հայտնել է, որ 2013թ. հոկտեմբերի 22-ին, երբ ինքը նույնպես գտնվել է ոստիկանությունում, լսել է կողքի սենյակից ծեծի ձայներ և նրա հավաստմամբ դրանք եղել են Անդրանիկ Մխիթարյանի ձայները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերն նշված հանգամանքները, դիմում եմ Ձեզ քրեական գործ հարուցելու, Ռոբերտ Մուրադյանին, Անդրանիկ Մխիթարյանին խոշտանգած, հոգեբանական ճնշումների ենթարկած ոստիկանության աշխատակիցներին հայտնաբերելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 24.06/230
24.06.2014 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

2014 հունիսի 19-ին իր իրավունքների պաշտպանության համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Աղայան Փ. 86/1 11 հասցեի բնակչուհի Սվետլանա Սուրիկի Պապինյանը: Կազմակերպությանն ուղղված դիմումում քաղաքացին հայտնել է, որ 2013 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունք խարդախության վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել:

Ըստ քաղաքացու դիմումի վարույթն իրականացնող մարմինը նախաքննության ընթացքում թույլ է տվել խախտումներ: Մասնավորապես, քաղաքացին հայտնում է, որ ՀՀ Ոստիկնության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Տ. Թադևոսյանը 2014 թվականի մարտի 17-ին Վանաձոր քաղաքի Համբարձումյան 10/25 հասցեի դիմաց գտնվող ավտոտնակում կատարել է անվահեծերի զննություն, որի ժամանակ, ըստ քաղաքացու դիմումի, ընթերականեր ներկա չեն եղել և առարկաների զննության մասին արձանագրության մեջ նշված քաղաքացիները (Արգամ Սուրենի Գեղամյանը և Պայծառ Կարենի Հարությունյանը) իրականում գոյություն չունեն և նրանց փոխարեն ստորագրել է քննիչը:

Տվյալ մտահոգությունը պարզելու համար քաղաքացու փաստաբանի կողմից հարցում է կատարվել ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության

Բազումի անձնագրային բաժին, որին ի պատասխան ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Բազումի անձնագրային բաժինը հայտնել է , որ նշված անձանց վերաբերյալ հաշվառման մասին համակարգչի պետռեգիստրի պահոցում տվյալներ չկան:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Ձեր լիազորություններով՝ դիմում եմ Ձեզ՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ սույն հաղորդմամբ ներկայացված հանցագործությունը (հանցագործությունները) բացահայտելու, քրեական գործ հարուցելու, հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Կից ներկայացվում է՝

- առարկաների զննություն կատարելու մասին արձանագրության պատճեն,
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բազում անձնագրային բաժնի պատասխան գրության պատճեն:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ս. Սողոմոնյան
ssoghomonyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԹԱԶՈՒՄԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ՀՀ ք. Վանաձոր, Ռուսթավի 1

(0322) 5-05-78
Ֆաքս (0322) 5-05-78

Թիվ 22/59-- 778

«31» 05 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՓԱՍՏԱԲԱՆ՝
Ա. ԱՐԱՅԱՆԻՆ

Ձեր 30.05.2014թ.-ի գրությանը

Հայտնում ենք որ, քաղ. Արգամ Սուրենի Գեղամյանի / ծնվ. 17.09.1992թ./ և Պայծառ Կարենի Հարությունյանի/ ծնվ. 21.11.1991թ. / հաշվառման մասին համակարգչի պետռեգիստրի պահոցում տվյալներ չկան:

ՀՀՊ ԱՎՎ Թազումի անձնագրային խմբի
առաջատար մասնագետի ժ/պ,
ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Վ. ՄԻՍԿԱՐՅԱՆ

116

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Առարկաների զննություն կատարելու մասին

ք. Վանաձոր «17» 03 2014թ.

Սկսվել է ժամը 09 06

Ավարտվել է ժամը 10 11

ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ, Տ.Թադևոսյանս

վարույթում գտնվող թիվ 19100514 քրեական գործով

ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 217, 218 հոդ. հոդ. պահանջներով, վերոնշյալ քրեական դատավարության 10/25 հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան,

բնական լուսավորվածության պայմաններում, ներկայությամբ ընթերականեր

1. Գեղամյանի Արփինե Սերգեյի (17.05.1982թ.ծ.) վերաբերյալ
2. Հարությունյան Դիանա Գարիկի (26.11.1991թ., ծն.) վերաբերյալ

մասնակցությամբ

կատարեցի սույն քրեական գործով

անհրաժեշտ

զննություն, որի կապակցությամբ, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 29 հոդ. և 218 հոդ. 5-րդ և 6-րդ կետերով, կազմեցի սույն արձանագրությունը:

Նախքան զննություն սկսելը, ՀՀ քր. դատ. օր-ի 101 հոդվածի պահանջների կապակցությամբ ընթերականեր Գեղամյանին և Հարությունյանին

բացատրվել և պարզաբանվել են ՀՀ քր. դատ. օր-ի 81 հոդվածով նախատեսված իրենց իրավունքները և պարտավանությունները:

1. 2.

Զննությամբ պարզվել է

հետևյալը՝ վերոնշյալ թ. Գեղամյանի վարույթում գտնվող թիվ 19100514 քրեական գործով յուրաքանչյուր կասկածյալի մոտ զննվեց ավելորդաբար ստացված թվով 4 անհրաժեշտություն, անհրաժեշտությունն ստացվեց Եվ, որոնցից յուրաքանչյուրի քրեական թիվ 1-ում: Անհրաժեշտությունը արտադրամասերում Եվ գտնվում Տեղամասի: Անհրաժեշտությունը անձնական

[illegible] do 6-go [illegible]: [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]:

Zebranych [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible]:

[illegible] 1. [illegible]
2. [illegible]

Ustalono [illegible] [illegible] [illegible]